ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՆՈՐ ՆՈՐՔ
ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՂԵԿԱՎԱՐ

«18» 08 2021 թ.

№ 27/01-97292

ք.Երևան, Գայի պողոտա 19
հեռ. /+374 11/ 51-86-86,
Ֆաքս՝ /+374 11/ 51-86-80
էլ փոստ. nor_norq@yerevan.am

«ՀԱՅՐ ԵՎ ՈՐԴԻ ՋԻԼԱՎՅԱՆՆԵՐ» ՍՊԸ-Ի
ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ՝ Վ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻՆ
ՀՀ , Տավուշ, Այրում, գ. Հաղթանակ
1-ին փ. 2-րդ նրբ. 3-րդ շ.

Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ
Պայմանագիրը միակողմանի (լրիվ) լուծելու մասին

Երևանի քաղաքապետարանի և «Հայր և որդի Ջիլավյաններ» ՍՊԸ-ի միջև 09.06.2021 թվականին կնքված «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-21/111-3» ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ «Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար»:

Պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջներով պայմանագրի կատարման ժամկետ է սահմանված եղել 30.06.2021 թվականը:

Սակայն 30.07.2021 թվականին Նոր Նորք վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմ է մուտքագրվել «Հայր և որդի Ջիլավյաններ» ՍՊ ընկերության տնօրենի գրությունն առ այն, որ ընկերությունը հրաժարվում է մատակարարել ԵՔ-ԳՀԱՊՁԲ-21/111-3 պայմանագրով նախատեսված ապրանքները առաջացած խոչընդոտների պատճառով (ՀՀ ՊԵԿ կողմից իրականացված կալանք):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ «Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի

գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը»:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը:

Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետի համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված»:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Հայր և որդի Ջիլավյաններ» ՍՊԸ-ն խախտել է պայմանագրով սահմանված պարտավորությունները, հիմք ընդունելով ապրանքները մատակարարելուց հրաժարվելու մասին ընկերության տնօրենի գրությունը և ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով՝ Երևանի Նոր Նորք վարչական շրջանի ղեկավարը միակողմանի լուծում է պայմանագրը՝ պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Հարգանքներով՝

Ս. ՂԱՄԲԱՐՅԱՆ

Կատարող՝ Ք. Նշանյան
Հեռ.՝ 011-51-86-28